

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ****ԿՈՒՍԱԿՐՕՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԻՑ**

Օգոստոս 10-էն 11 օրերը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան համար ցնծութեամբ եւ հրճուանքով զեղուն օրեր էին, որովհետեւ հինգ տարի վերջ Սուրբ Աթոռը դարձեալ կ'ունենար իր հունձը:

Շաբաթ, 10 Օգոստոս, 2024-ին, յետ Կիրակնամտից Ժամերգութեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Վարդավառի տօնին յատուկ նախատօնակը, որուն յաջորդեց երկրորդ նախատօնակ մը եւս՝ ի յիշատակ եւ ի պատիւ Ս. Յակոբոս Տեառնեղբայր արդար առաքելոյն, որ սա Երուսաղէմի առաջին եպիսկոպոսն ըլլալով իր Անդրանիկ Սուրբ Պատարագը մատուցած է Վարդավառի տօնին օրը: Ահա այդ յիշատակութեան առիթով Տեառնեղբօր Սուրբ Աթոռը վայելուչ կերպով զարդարուած էր թագով, եմփորոնով, արտախուրակներով եւ զաւազաններով, իսկ Սուրբ Աթոռոյս կաթողիկէն շրջանակուած էր արծաթածոյլ իրերու ագուցիկ պատկերներով եւ զարդարուած ծաղիկներով:

Օրուան Յայսմաւուրքը Լուսարարապետ Սրբազան Հօր որոշումով կարգաց Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան: Նախատօնակին եւ Տեառնեղբայր Յակոբոս Առաքելի յիշատակի հանդէսին նախագահեց Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան: Ապա հանդիսապետ Սրբազան Հայրը եպիսկոպոսական հանդերձանքով բազմեցաւ բեմին առջեւ զետեղուած Աթոռին վրայ եւ կատարեց Քահանայական ձեռնադրութեան կոչումը Սուրբ Աթոռոյս Բարեշնորհ Գէորգ Սարկաւազ Անտոնեանի, Գրիգոր Սարկաւազ Թաքուշեանի եւ Աշոտ Սարկաւազ Ղազարեանի:

Ընծայեալները Աւագ Դռնէն ծնրաքայլ սկսան յառաջանալ դէպի Ս. Խորան, առաջնորդութեամբ Խարտաւիլակ Սրբազան Հօր՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի եւ առընթերակայութեամբ Հոգեշնորհ Տ. Խաղ Մ. Վարդապետ Ժունտուրեանի, Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի, եւ եկան ու բոլորուեցան ձեռնադրիչ Սրբազանին շուրջ:

Երկար, հոգեպարար եւ իմաստալից աղօթքներէ ետք, տեղի ունեցաւ ընծայեալներու հաւատքի հարցաքննութիւնը: Անոնք ձեռնադրիչ Սրբազան Հօր հարցումներուն պատասխանելով՝ նզովեցին Ուղղափառ եկեղեցւոյ կողմէ դատապարտուած «չար աղանդներու հերձուածողները», յայտարարեցին «աշակերտիլ եւ հետեւիլ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան Սրբազան Հայրապետներուն, եւ միասնաբար արտասանեցին հաւատոյ հանգանակը Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան: Այս ձեւով անոնց դարձան Կոչեցեալներ:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէ»-ի եւ «Հսկման» կար-

գեր:

Կիրակի, 11 Օգոստոս, 2024-ին, Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնի առաւօտուն, տեղի ունեցաւ քահանայական օծումը երեք կոչեցեալ Սարկաւագներուն: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ պատարագեց Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հայրը, որու ընթացքին Սուրբ Աթոռոյս երեք Սարկաւագները ձեռնադրեց քահանայ:

Ճաշու գրքի ընթերցումին Սուրբ Պատարագը դադար առաւ եւ «Այսօր աստուածութիւնն զուարճանայ» շարականով սկսաւ Ձեռնադրութեան խորհուրդի առաջին մասը՝ տպաւորիչ հանդիսատրութեամբ: Երեք քահանայացուները Խարտաւիլակ Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Սրբազան Հօր առաջնորդութեամբ եւ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի առնթրակայութեամբ ծընրաքայլ բարձրացան Սուրբ Խորան: Խարտաւիլակ Սրբազան Հայրը ընծայեալները ներկայացուց Ձեռնադրիչ Սրբազանին՝ վկայելով անոնց արժանատրութեան մասին: Ընծայեալները բոլորուեցան Սրբազանին շուրջ, կարգ մը ներշնչող աղօթքներէ ետք անոնք դարձան դէպի արեւմուտք եւ հրաժարեցան աշխարհէն մինչ կ'երգուէր «Աստուածային եւ Երկնաւոր Շնորհ» հոգեյոյզ շարականը: Երբ վերստին դարձան Ձեռնադրիչ Սրբազանին, ան աղօթքի մը ընթերցումէն ետք անոնց պարանոցներէն վար բոլորեց ձախ ուսերէն կախ ուրարները՝ ի նշան Քրիստոսի լուծի ամբողջական ստացումին:

Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Ողջոյն»ի պահը, ուր դարձեալ ընդհատուեցաւ ու ձեռնադրութեան արարողութիւնը շարունակուեցաւ: Ընծայեալները վերստին ծունկի եկան Ձեռնադրիչ Սրբազանին շուրջ, որ կարգ մը խորիմաստ աղօթքներէ ետք անոնց տուաւ:

Փիլոն՝ որպէս զրահ արդարութեան:

Սաղաւարտ՝ նշան փրկութեան:

Շուրջառ՝ հանդերձ փրկութեան:

Գօտի՝ իշխանութիւն կապելու եւ արձակելու:

Անմիջապէս անոնք անցան Աւագ Խորանին ետին՝ լման քահանայական հանդերձանքով զգեստաւորուելու: Քանի մը վայրկեանէն, երբ կը երգուէր անոնց առաջին «Խորհուրդ Խորին»ը վերադարձան բոլորովին այլափոխուած: Հասած էր այն յուզիչ պահը, որուն հաւատացեալները ակնդէտ կը սպասէին: Խարտաւիլակ Սրբազան Հայրը Սուրբ Սեղան բերաւ Միւռոնաթափ Աղանին եւ զայն երկիւղածութեամբ յանձնեց Ձեռնադրիչ Սրբազանին, որ «Առաքելոյ Աղանոյ իջանելոյ մեծաձայն հնչմամբ» շարականը երգելով՝ Սուրբ Միւռոնը հեղուց ոսկեայ ընդունարանի մէջ, որմէ պիտի օծէր ճակատը, աչ եւ ձախ ձեռքերը նորընծաներուն: Օծման խորհրդաւոր ու նուիրական պահուն, Ձեռնադրիչ Լուսարարապետ Սրբազան Հայրը Բարեշնորհ Գէորգ Սարկաւագ Անտոնեանը անուանակոչեց ՏէՐ ՍԵՐՈՎԲԷ ԱԲԵՂԱՅ, Գրիգոր Սարկաւագ Թաքուշեանը անուանակոչեց ՏէՐ ՍԻՈՆ ԱԲԵՂԱՅ եւ Աշոտ Սարկաւագ Ղազարեանը անուանակոչեց ՏէՐ ՍՈՒՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ: Ապա ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն մատուցանելու Սուրբ Պատարագ, իրենց առաջին օրհնութիւնները ժողովուրդին տալէ ետք շարուեցան Սուրբ Խորանին ձախ կողմը: Ապա Ձեռնադրիչ Սրբազանը տուաւ նորընծաներուն իր պատգամը կարճ, բայց իմաստալից քարոզով մը, բացատրելով քահանայի դերը:

«Ողջոյն»ի պահուն, Հոգեւոր Հայրերը Պատրիարք Սրբազան Հօր առաջնորդութեամբ բարձրացան Սուրբ Խորան եւ համբուրեցին նորընծաներուն ճակատներն ու աջերը:

Պատարագի վերջաւորութեան, տեսարանը սրտառուչ էր: Մինչ նորընծաները Մեծ Ատենի ծայրը դրուած գրակալներու վրայ զետեղուած Աւետարաններու ընթերցումը կը կատարեն, դպիրները եւ հաւատացեալները ուրախութեամբ իրենց ջերմ շնորհաւորութիւնները կը յայտնէին նորընծաներուն, եւ աջհամբոյրով կը ստանային անոնց անդրանիկ օրհնութիւնը:

Սուրբ եւ Անմահ Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ նաեւ Խաղողօրհնէք:

- Կէսօրէ ետք, Ժամերգութեան աւարտին, նորած ընծայեալները Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի ձեռամբ ստացան կուսակրօն քահանայի վեղարի օրհնութիւնը:

Իրիկնադէմին, Պարտիզաթաղի վարդապետաց ճաշարանին մէջ, միաբանութեան եւ նորընծաներու հարազատներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք, որու ընթացքին եղան բարի մաղթանքի խօսքեր: Շնորհաւորական խօսքով Խարտաւիլակ՝ Գերաշնորհ Տ. Թէոփորոս Սրբազան դիմեց նորընծաներուն, անդրադարձաւ նաեւ մեր Տիրոջ Պայծառակերպութեան տօնի խորհուրդին եւ յատկապէս շեշտեց Պայծառակերպութեան տօնի կարեւորութիւնը Սուրբ Աթոռոյս եւ Սրբոց Յակոբեանց Զինւորեալ Միաբանութեան համար, քանզի Սուրբ Աթոռոյս բարեխօս Սուրբը՝ Յակոբոս Տեառնեղբայր արդար առաքեալը, Երուսաղէմի առաջին եպիսկոպոս ըլլալով իր անդրանիկ Պատարագը մատուցած է Պայծառակերպութեան տօնին: Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ նորընծաներէն Հոգեշնորհ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան:

Նորընծաներն իրենց «Քառասունքի» ապաշխարութեան եւ պատրաստութեան շրջանը պիտի անցընեն Սուրբ Հրեշտակապետաց վանքին մէջ, ուսանելով Սուրբ Պատարագի եւ միւս ծէսերու կարգերը: Այս շրջանի իրենց ուսուցիչն է Հոգեշնորհ Տ. Ներսէհ Վարդապետ Ալոյեան:

Նորընծայ հոգեւորականներն իրենց Անդրանիկ Պատարագները պիտի մատուցեն հետեւեալ օրերուն՝

Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր, 2024-ին, Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան,

Ուրբաթ, 13 Սեպտեմբեր, 2024-ին, Տ. Սիրոն Աբեղայ Թաքուշեան,

Շաբաթ, 14 Սեպտեմբեր, 2024-ին, Տ. Սուրէն Քահանայ Ղազարեան,

Իսկ Կիրակի, 15 Սեպտեմբեր, 2024-ին, անոնց ուսուցիչ՝ Տ. Ներսէհ Վարդապետ Ալոյեան:

ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ